


Լ. Մ. Երիցյան

ՄԵԾ  
ԼՈՒՍԱԿՈՐԶԻ  
ԺԱՌԱՆՔՆԵՐԸ




8(022)  
8-86

ԼԵՎՈՆ ԵՐԻՑՅԱՆ

**ՄԵԾ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ  
ՓԱՌԱՆԳՆԵՐԸ**

2364

ԵՐԵՎԱՆ «ՀՍՅԱՍՏԱՆ» 1987



Գրախոսներ՝ Մ. Արեղյանի անվան գրականության  
ինստիտուտի ավագ գիտաշխատողներ, բանասիրական  
գիտությունների թեկնածուներ Մ. Ս. Սաղյան և  
Ա. Մ. Վարդանյան

4290.1.38.10.1 ԳՄԳ  
393.4.3.34.3.6

**Երեզյան Լ. Մ.**

Ե 864 Մեծ լուսավորչի ժառանգները.— Եր.: Հայաստան,  
1987.—34 էջ, 4 թ. նկ.:

Գրքույիում փաստական նյութի հիման վրա հեղինակը շարա-  
դրել է Խ. Արուստյանի ժառանգների կյանքի և գործունեության հա-  
մառու տարեկրթությունը, նրանց վաստակը գիտահետազոտական  
աշխատանքներում և լեզուների ուսումնասիրության բնագավառում  
նախատեսված է ընթերցող լայն շրջանների համար:

4603000000

Ե ————— 154—87  
701 (01) 87

ԳՄԳ 83—321

**Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն**

Ամեն մի հայ իր արյան մեջ մի մասնիկ Արուստյան ունի:

Հայաստանի վերքը իր ողջ էությունը զգացող ու Հայաս-  
տանով շնչող այդ մարդը այսօր էլ կա, ապրում է:

Ժողովուրդը հավաստում է Արուստյանի անմահությանը, ու  
բայցում է նա իր ժողովրդի հետ զեպի դարերը: Քայլում է ու  
նրա ձայնը լսվում է այսօրվա հանդիսություններում ու հաղ-  
թարշավներում: Կա նրանից մի ձույլ Մասիսի մեջ, կարտում  
ենք Մասիսին, ու զգում ենք նրա ներկայությունը, որը Մա-  
սիս բարձրացավ իր խավար դարի միջից, բարձրացավ այդ  
սարը լուսավորության շահը ձեռքին:

Ու այժմ օտար ասիերում գեղերող ամեն մի հայի առջև  
Արարատի պատկերի հետ հասնում է նրա՝ Արուստյանի գեղե-  
ցիկ ու վեհաստիպ կերպարը, որը կախարհում, ձգում է զեպի  
հայրենիք: Աշխարհի որ ծեղի հողն է, որ իր վրա չի կրում  
թափառ հայի ոտնահետքերը, որոնք դալիս խաշաձեկում են  
Քանաքեռում՝ այդ լուսեղեն մարդու տանը...

\*\*\*

Թիֆլիսի նահանգական դպրոցի տեսուչ աշխատելու ժա-  
մանակ 1838 թվականին Խ. Արուստյանը հանդիպում է 18-ամ-  
յա էմիլիե անունով մի աղջկա: Շարունակվող հանդիպում-  
ներն ու զրույցներն աստիճանաբար ընդունում են ջերմ ու  
անկեղծ բնույթ և սարվա երկրորդ կեսին ավարտվում եր-  
կուստեր սիրո խոստովանությամբ:

Խ. Աբովյանը հստակ պատկերացնում էր այն բարդ իրավիճակը, որն ստեղծվել էր այս սիրո պատճառով՝ քրիստոնեյա, հոգևոր աշխարհի աստիճանավոր և այլազգի ու այլազավան օրիորդ... Համենայնդեպս հնարավոր համարելով աշխարհիկ կյանքի համար նման քայլը, Խ. Աբովյանը հարցի լուծմանը մոտենում է սթափ: Անհրաժեշտ էր թուլլատրություն ստանալ քրիստոնեական և լուսնական հոգևոր աշխարհի մեծերից, հրաժեշտ տալ հոգևոր կոչմանը, որից հետո միայն կնքել ամուսնական դաշն: Այդպես էլ վարվում է:

1838 թվականի դեկտեմբերի 15-ին, Խ. Աբովյանը դիմում է էջմիածնի սուրբ-աթոռ լուսավորական գահի Սինոդին: Դիմումի մեջ նա շարադրում է իր համառոտ կենսագրությունը, որն ամբողջությամբ կապված է եղել ուսման և հոգևոր կյանքի առաջին քայլերի հետ: «Տասը տարեկան հասակում, — նշում է նա, — ընդունվեցի ուսման, մայր աթոռ սուրբ էջմիածնի խնամակալության ներքո, այնտեղ մնացի շատ տարիներ, սկզբում ծառայելով որպես դպիր, այնուհետև ծառայության անցա Անտոն եպիսկոպոսի մոտ և սույն դպրոցի ավարտական վկայականով եկա Թիֆլիս ու այստեղ սովորեցի երկու տարի, 1828 թվականին նորից վերադարձա սուրբ աթոռ: Աբովյանը հուզմունքով նշում է բացառիկ այն ուշադրությունը, որը նրան հնարավորություն է տվել վեց տարի սովորել և ավարտել Դորպատի համալսարանն ու վերագառնալ հայրենիք: Այնուհետև նա շարունակում է բացատրել, որ չնայած ցանկացել է իր նախկին ծառայությանն անցնել, բայց շատ հանգամանքների պատճառով անկարող լինելով հոգևոր կոչմանը ծառայել, ստիպված է եղել մտնել արքունի ծառայության: Թվարկելով մի շարք այլ պատճառաբանություններ, նա խնդրում է Սինոդին. «Օրենքով ինձ ազատել հոգևոր կոչումից և շնորհել այն թուղթը երկու օրինակից»...: Վերջում Աբովյանը հավաստիացնում է Սինոդին իր նվիրվածությունը սուրբ աթոռին և խնդրում շնորհել իր դիմումը:

Հաջորդ տարին, 1839 թվականի հունվարի 23-ին, Սինոդը լսում է Թիֆլիսի նահանգական դպրոցի տեսուչ Խաչատուր Աբովյանի խնդիրը և տալիս դրական լուծում: Սինոդի որոշման մեջ գրված է. «Համաձայն իր ցանկության, կիսասարկա-

վագ Խաչատուր Աբովյանին ազատել հոգևոր տեսչությունից և տալ նրան ըստ պատշաճի վկայական»: Վկայականն ուղարկվում է Արաստանի նահանգապետին, որն իր հերթին, Անդրկովկասյան դպրոցների վերատեսչության միջոցով նույն թվականի փետրվարի 13-ին հանձնում է Աբովյանին:

Հաղթահարված էր գլխավոր պատանեշը, Խ. Աբովյանն ազատ էր հոգևոր կաշկանդվածությունից: Անհրաժեշտ էր նաև պարզ ու որոշակի տեսք տալ իր և էմիլիեի ամուսնական կյանքի հարցին: Այս առումով անշափ հետաքրքրական է սիրո ու փոխադարձ նվիրվածության այն հավաստիքները, որոնք շարադրվել ու պաշտոնական տեսք են ստացել Խաչատուրի և էմիլիեի, ինչպես նաև հայազգի երկու ու մեկ գեղամանացի վկաների ստորագրությամբ: Փաստաթուղթը կոչվում է «Դաշն»: Այն սկսվում է հետևյալ կերպ. «Մենք՝ ներքոհրչյալ հայազգի Խաչատուր Ավետիքի Աբովյանը, Թիֆլիսի պատանեպան դպրոցի վերատեսուչ և գերմանացի էմիլիե Լոօդե, համաձայնության գալով՝ 1838 թվականի սեպտեմբերի 8-ին, ցանկանալով սուրբ պսակով միանալ իրար հետ, մեր միջև այս պայմանն ենք գնում...

էմիլիեն խոստանում է, որ որևէ կերպ առիթ չի ունենա իր ամուսնուն հարկադրելու իր հայրենիքը՝ Ռեել քաղաքը գնալու, պսակադրությունը պետք է կատարվի հայկական եկեղեցում, հայ քահանայի կողմից, իրենց երեխաները նույնպես պետք է մկրտվեն հայկական եկեղեցում՝ հայկական դավանանքի համաձայն:

Խաչատուր Աբովյանն իր հերթին պարտավորվում է երբեք չընդունալ իր կնոջ դավանանքին:

Դաշնը կազմված և վավերացված է Թիֆլիսում, 1839 թվականի օգոստոսի 6-ին»:

Ամուսնական գործն իր օրինական ավարտին հասցնելու նպատակով, «Դաշնը» կնքելուց մեկ ամիս հետո, Աբովյանը դիմում է հայոց առաջնորդարան գրավոր թուլլատրություն ստանալու գերմանական քահանայից և պսակվել հայոց մայր եկեղեցում: Շուտով հետևում է գրավոր պատասխանը, որի տակ ստորագրել էր պատտոր Ռօօտը «... ևս իմ կողմից ո-

չինչ օրինավոր արդիւք չեմ գտնում վերոհիշյալ անձանց ա-  
մուսնանալու և հայոց եկեղեցում պատկազրվելու»:

Այդ արարողութիւններից հետո պատկազրութիւնը տեղի  
է ունենում 1839 թվականի դեկտեմբերի 10-ին:

Մի քանի խոսք էմիլիե երիտօրեան Լօօզեի ազգային պատ-  
կանելութեան մասին:

էմիլիեի հայր՝ երիտօրեան Լօօզեն ազգութեամբ եղել է  
էստոնացի, փայտամշակման գծով ենթավարպետ, իսկ մայ-  
րը՝ գերմանուհի: Գոյութիւն ունեցող օրենքների համաձայն  
էմիլիեն ազգութեամբ էստոնուհի է: Ամուսնութեան հաջորդ  
տարին՝ 1840 թվականի մայիսի 31-ին ծնվում է նրանց ա-  
ռանկեղ՝ Վարդանը, իսկ 1843 թվականի հունիսին դուստ-  
րը՝ Զարմանդուխտը: Տարբեր կերպ է դասավորվում ևս Ա-  
բովյանի զավակների հետագա կյանքը: Այդ իսկ պատճառով  
անհրաժեշտ է Վարդանի և Զարմանդուխտի սերունդների մա-  
սին խոսել ըստ ճյուղերի:

### ՎԱՐՂԱՆԻ ՃՅՈՒՂԸ

Ընդամենն ութ տարեկան էր Վարդանը, երբ զրկվեց հո-  
րից: Նրա հետագա խնամքն ու դաստիարակութիւնը մնաց  
մօր՝ էմիլիեի վրա, որն ամուսնուց հետո ապրեց 22 տարի  
և մահացավ 1870 թվականին: Ինչ տարեկանից Վարդանը  
սկսում է սովորել Քիֆլիսի ազնվականական գիմնազիայում:  
Նրկու տարի հետո ընդունվում է Ներսիսյան դպրոցը հայերե-  
նի մեջ կատարելագործվելու համար: Պարզվում է, որ Ներսես  
Աշտարակեցիի ցանկութեան էր հայտնել Վարդանի հետագա  
կրթութեան ու դաստիարակութեան հոգար վերցնել իր վրա.  
կաթողիկոսը նախատեսել էր նրան կրթութեան տալ Մոսկվա-  
յի կաթարյան ճեմարանի արևելյան լեզուների բաժնում: Մա-  
կայն երեք տարի հետո, հիվանդութեան և այլ հանգամանք-  
ների պատճառով, Վարդանը դուրս է գալիս Ներսիսյան դպ-  
րոցից, միաժամանակ զրկվում է կաթարյան ճեմարանում սո-  
վորելու հնարավորութեանից: Մօր՝ էմիլիեի գծվարին ջան-  
քերի շնորհիվ նա 1854 թվականից մինչև 1859 թվականը սո-  
վորում է Խարկովի մասնավոր պանսիոնում: Նույն տարին

տեղափոխվում Գորսյատ (Տարսու), իսկ 1860 թվականին  
այս համալսարանի ուսանողն էր, որտեղ հայազգի պատանի-  
ներից առաջինն ավարտել էր հայրը: Այստեղ կարևոր է նշել  
մի հանգամանք: Խաչատուր Աբովյանը, ինչպես հայտնի է,  
իր կյանքի վերջին տարիներին Երևանի նահանգական դպրո-  
ցի տեսուչն էր: Որպես դրող, նա դեռևս չէր տպագրվում: Եվ  
ընտանիքի ապրուստի միակ աղբյուրը դպրոցից ստացած  
վաստակն էր, որը հաղիվ բավարարում էր ընտանեկան նվա-  
զագույն պահանջները: Հասկանալի է, որ մահվանից հետո  
նա ոչինչ չէր թողել կնոջ ու երեխաների ապրուստի համար:  
Եվ զարմանալի չէ, որ Վարդանը, հաճախ ապրուստի անհրա-  
ժեշտ միջոցներ չունենալու պատճառով, գրկվում էր ուսումը  
ցանկացած տեղում շարունակելու հնարավորութեանից:

Համալսարանում ուսանելու տարիներին Վարդանին միշտ  
հետապնդում էր նյութական դժվարին կացութեանը: Այդ  
պատճառով նա 1862 թվականին դիմում է համալսարանի  
ռեկտորին, որպեսզի գոյութիւն ունեցող կարգի համաձայն,  
քննութեան ընդունեն իրենից և տան գիմնազիայի ու սեմի-  
նարիայի ուսուցչի կոչում: Քննութեանները հաջող հանձնե-  
լուց հետո Վարդանը ստանում է այդ կոչումը, յոթ տարի շա-  
րունակ դասավանդում է ռուսաց լեզու, պատմութեան, գե-  
ղագրութեան հետևից Լիֆլանդիայի նախ Ֆելին գյուղաքա-  
ղաքում, ապա՝ Ռեւել (Տալլին)՝ բաղաբի տարբեր ուսումնա-  
կան հաստատութիւններում:

1869 թվականի վերջերին, ընդառաջելով մոր թախանձա-  
գին խնդրանքներին, Վարդան Աբովյանը վերադառնում է  
Անդրկովկաս և անմիջապես ուսուցչի պաշտոն է ստանում Ա-  
խալքալաքում: Ռուսերենի, պատմութեան և աշխարհագրու-  
թեան դասեր է տալիս տղամարդկանց և կանանց գիմնազիա-  
ներում, տեղի հոգևոր դպրոցում: Մեկ տարի հետո վերա-  
դառնում է Քիֆլիս և մասնավոր դպրոցներում ու գիմնա-  
զիաներում դասեր է տալիս նույն առարկաներից: Մակայն  
պայմաններն ստիպում են Վարդանին 1875 թվականին տե-  
ղափոխվել էջմիածին, որտեղ հինգ տարի ուսուցչութիւն է  
անում Գեորգյան ճեմարանում: Այնուհետև տասը տարի ապ-  
րում և աշխատում է Երևանի թեմական դպրոցում՝ որպես  
ուսուցիչ և դաստիարակ:

Հաճախակի սեղափոխութիւնները, երեսնանորով ծանրութեան ված լինելը և սրու Հանգամանքներ հնարավորութիւն շեն տալիս նրան զբաղվելու ստեղծագործական աշխատանքով: Եվ նա ստիպված, 1890 թվականին, հանգամանալից մի նամակով դիմում է Անդրկովկասյան դպրոցների հոգաբարձու Կ. Պ. Յանովսկուն, որտեղ շարադրելով իր ընտանիքի նյութական ծանր պայմանները, խնդրում է իրեն աշխատանքի նշանակել էջմիածնի հոգևոր ակադեմիայում: Հոգաբարձուն կատարում է նրա խնդրանքը:

Իր կյանքի վերջին վեց տարիները (1891-1896 թ թ.) վարդան Աբովյանն աշխատում է էջմիածնի Գևորգյան ճեմարանում որպես դաստիարակ, միաժամանակ դասավանդելով ռուսերեն, պատմութիւն և աշխարհագրութիւն:

Վարդան Աբովյանը մահացել է 1896 թվականի նոյեմբերին, թաղված է ս. Գայանե եկեղեցու բակում:

Այսպիսով, իր կյանքի ավելի քան 33 տարիները վարդան Աբովյանը նվիրել է մանկավարժական աշխատանքի՝ ամեն ինչում հեռուելով հորը: Լինելով ժամանակի առաջադեմ մանկավարժներից մեկը՝ նա ուսուցանում էր հայ և այլազգի պատանիներին, դաստիարակում նրանց և Աբովյանի լուսավորչական հայացքներով առաջնորդվելով հոր մանկավարժական առաջադեմ մեթոդներով:

Վ. Աբովյանը բազմակողմանի դարգացած մարդ էր: Նրա համար գիտելիքների հարստացման անսպառ աղբյուր է հանդիսացել հոր թողած մեծ ժառանգութիւնը: Նա երկյուղածութիւնով էր մտտեմում և Աբովյանի արխիվին, որի տնօրենն էր մոր մահից հետո, և սթափ մտքով կարողանում էր գնահատել, արժեքավորել այն նորն ու կատարել, որ կար Աբովյանի ստեղծագործութիւն մեջ: Ահա թե ինչու ամեն անգամ, երբ անհրաժեշտ էր լինում մեծ լուսավորչի որևէ ստեղծագործութիւնը տպագրութիւն հանձնել, նա, առանց ջանք խնայելու, նվիրվում էր այդ սրբազան գործի իրականացմանը, հսկում էր սրբագրման ու համեմատութիւն աշխատանքները՝ երբեք չբաժանվելով հոր ձեռագրերից:

Վարդան Աբովյանը ամուսնացել էր Կատարինե Յարալյան-Աբովյանի հետ: Նրանք ունեցել են ութ զավակ, որոնցից

նաշատուրը, Վահանն ու Պետրոսը մահացել են դեռ մանուկ հասակում: Մնացած երեք տղաներին և երկու աղջիկներին մեծացրել է ու կրթութիւն տվել:

Վարդանը կենսուրախ հայր էր: Ծանր սխտեմատիկաբար կազմակերպում էր ընտանեկան ցերեկույթներ, որտեղ, բացի հետաքրքրաշարժ զրույցներից ու խաղերից, երգեր ու պարեր էր սովորեցնում երեխաներին:

Նա շուտ մահացավ, երբ երեսններից ոչ մեկը դեռ չէր հասունացել, և հինգ երեխաների կրթութիւնն ու դաստիարակութիւնն գործը ամբողջութիւնով ծանրանում է ջանասեր մոր՝ Կատարինեի ուսերին: Նրանց համար ստեղծվում է ահավոր ծանր վիճակ, ցամաքում է կյանքի միակ աղբյուրը: Տիկին Կատարինեն աշխատել չէր կարող, նա հագիվ էր հոգում չորս դպրոցահասակ և մեկ կրծքի երեխայի անհրաժեշտ կարիքները: Բայց նույնիսկ այսպիսի պայմաններում նա չի վճատվում և ստեղծում է բոլոր հնարավորութիւնները, որպեսզի երեխաները ստանան անհրաժեշտ կրթութիւն:

Հարկ է նշել, որ Կատարինե Աբովյանը կենցաղային ամենատուր պայմաններում անգամ, ինքնադժուրիւն զնով պահանում էր և Աբովյանի գրական ժառանգութիւնը: Նա դիմում է հայտնի և անհայտ անձանց՝ հուսալով նրանց մոտ հայտնաբերել արույանական որևէ մասունք: Աշխատում էր հնարավորին չափ հավաքել, ամբողջացնել մեծ լուսավորչի գրական ժառանգութիւնը, և ջանք չի խնայում հասարակութիւնը ներկայացնելու Աբովյանի անտիպ ստեղծագործութիւնները: Մեծ ուրախութիւն և հոգեկան անդորրութիւն էր բերում նրան այն բանի գիտակցութիւնը, որ ինքն էլ երախտիք ունի մեծ լուսավորչի գրական ժառանգութիւն պահպանման գործում:

1904 թվականին, թիֆլիսում, իր ջանքերով լույս ընծայած և Աբովյանի «Թուրքի աղջիկը» և «Բարեկամի մոտ» ստեղծագործութիւններն ամփոփող գրքի առաջարանում տիկին Կատարինեն գրում է՝ «Հուսալով, որ այս առաջին փորձը հավանութիւն և ընդունելիւն կգտնի հասարակութիւն կողմից և, որ զլիսավորն է, կարժանանա նրա աշակցութիւնը, կշտապենք և մյուս գրական բեկորները ի լույս ընծայել»:

Վարդանի ազգա օրգին՝ Կոնստանտին Արովյանը ծնվել է 1880 թվականին, սովորել է էջմիածնի Գևորգյան ճեմարանում, այնուհետև Քիֆլիսի ներսիսյան դպրոցում, դարձյալ էջմիածնում, որտեղ և 1897 թվականին փայլուն ավարտում է լրիվ դասընթացը: Ճեմարանի մանկավարժական խորհրդի հրաշխավորութեամբ նույն թվականին Կոնստանտինը գործուղվում է Գերմանիա՝ բարձրագույն կրթությունն քստանալու: Յոթ տարի սովորում է Լայպցիգի համալսարանի քիմիական ֆակուլտետում և 1904 թվականին քիմիկոսի գիտյումով վերադառնում է Հայաստան: Սակայն ըստ մասնագիտության գործ չձարելու պատճառով մեկնում է Քիֆլիս, այստեղ էլ նույն ղեկավարության առաջ է կանգնում: Միակ տեղը, ուր նա կարող էր աշխատել, դա Ամբարդինովի քիմիական լաբորատորիան էր:

Մեկ տարի պարապ մնալուց հետո Կոնստանտին Արովյանը 1905 թվականին հրավիրվում է Ալեքսանդրապոլ (Լենինական)՝ տեղի առևտրական ուսումնարանում գերմաներեն դասավանդելու: Կոնստանտինն աշխատում է այստեղ տասներեք տարի: Գերմաներենին զուգահեռ նա ջանք չէր խնայում քիմիայի բնագավառի իր գիտելիքների պահպանման և կատարելագործման համար: Ալեքսանդրապոլում եղած ժամանակ նա արդեն մեծ բնականի տեր էր, բացի երեք հրեիաներից այստեղ էին նաև մայրն ու երկու քույրերը:

1919 թվականին Կոնստանտինը բնտանիքով տեղափոխվում է Քիֆլիս, այստեղ ևս վարելով գերմաներենի դասատուի պաշտոնը: Որպես լավագույն մանկավարժ և մի շարք լիզոնների գիտակ, Կոնստանտինը մի քանի տարի կատարում է Աբխազիայի հայկական դպրոցների տեսուչի պարտականությունը:

1927 թվականին Կոնստանտին Արովյանը բնտանիքով տեղափոխվում է Երևան: Ակտիվ 1930 թվականից նա հնարավորություն է ստանում աշխատելու սիրած մասնագիտությամբ: Շուրջ 25 տարի նա դասախոսել է Երևանի պետական համալսարանում, օտար լիզոնների, գյուղատնտեսական և

պոլիտեխնիկական ինստիտուտներում, որտեղ անալիտիկ քիմիայի դասախոսի իր պարտականությունները կատարելու հետ միաժամանակ եղել է նաև լաբորատոր աշխատանքների լավագույն կազմակերպիչներից մեկը:

Կոնստանտին Արովյանը դասախոսական աշխատանքներին պուգահեռ կատարել է նաև բազմաթիվ գիտահետազոտական աշխատանքներ, ուսերենից հայերեն է թարգմանել մի շարք դասագրքեր, որոնց թվում՝ Մենշուտկինի «Անօրգանական քիմիան» և «Գյուղատնտեսական միջատաբանություն» գրքի՝ «Քիմիական պայքարի մեթոդները» բաժինը:

Մոր Կատարինեի մահվանից հետո, իր պապի՝ Խաչատուր Արովյանի ձեռագրերի պահպանման գործում մեծ դեր ունի Կոնստանտին Արովյանը, նրա շնորհիվ է, որ ներկայումս Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպանվում է Խ. Արովյանի ձեռագրի գանձերի մեծ մասը, որը հանձնվել է թանգարանին Լևոն, Վիկտորյա, Շուշանիկ և Վարդան (փոքր) Արովյանների միջոցով՝ 1938 թվականին: Բայց Կոնստանտին Արովյանի վաստակը չի սահմանափակվում միայն ձեռագրերի պահպանմամբ: Նա Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հանձնարարությամբ մեծ սիրով ու բարձր որակով հայերեն է թարգմանում Խ. Արովյանի զոթատառերով գրված բոլոր երկերը, որոնք տեղ են գտել գրողի՝ ակադեմիական հրատարակության 7, 8, 10 հատորներում:

Կոնստանտին Արովյանը, հետևելով պապի և հոր օրինակին, իր կյանքի մոտ 50 տարին նվիրում է մանկավարժությանը: Նա մահացել է 1954 թվականին:

Կ. Արովյանը ունեցել է երկու աղջիկ և մեկ տղա: Ավագ դուստրը՝ էմիլիան, ծնվել է Ալեքսանդրապոլում: Միջնակարգ և բարձրագույն կրթություն է օտացել Քիֆլիսում (ավարտել է Քիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետը): 1927 թվականին աշխատանքի է անցել Երևանի խաղողագիտակազմական զոնալ կայանում: Այստեղ պրոֆ. Ն. Ի. Պրոստոֆենովի ղեկավարությամբ գիտական հետազոտություններ է կատարում և հրատարակում երկու աշխատություն:

էմիլիա Արովյանը դասավանդել է նաև Երևանի քիմիական տեխնիկումում, աշխատել Հոկտեմբերյանի էֆիրայուզային կուլտուրաների ղոնալ կայանում: 1960 թվականին նա աշխատանքի է անցնում լեռնամետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտում, որտեղ վարում է դանազան պաշտոններ:

Էմիլիա Արովյանը ունի երեք զավակ՝ էմիլ, Ռոբերտ և Սոֆյա Հարությունյանները, որոնք ավարտել են Երևանի Զերժինսկու անվան դպրոցը և ստացել բարձրագույն կրթություն:

Էմիլ Հարությունյանը ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: Նա քիմիական գիտությունների ղոկոտոր է, աշխատում է ՍՍՀՄ ԳԱ բյուրեղագիտության ինստիտուտում: Հեղինակ է 55 անուն գիտական աշխատությունների:

Ռոբերտ Հարությունյանը ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը: 1972 թվականին գիտերտացիա է պաշտպանել և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի աստիճան: Նա 21 անուն գիտական աշխատությունների հեղինակ է:

Էմիլիայի դուստրը՝ Սոֆյան, ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: Աշխատում է ՀՍՍՀ գյուղական շինարարության մինիստրության տնտեսական պլանավորման վարչությունում:

Կոնստանտին Արովյանի մյուս դուստրը՝ Կատարինեն, նույնպես ստացել է բարձրագույն գյուղատնտեսական կրթություն: Աշխատել է գյուղատնտեսական և անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտներում, երկար ժամանակ աշխատել է Երևանի բնության պահպանության կոմիտեում: Կատարինեի ավագ որդին՝ Վիգեն Քումանյանը, ավարտել է Մոսկվայի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, աջուհետև Կուրչատովի անվան ատոմային ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան: Նա ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է: Աշխատում է Երևանի գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտում, որպես լաբորատորիայի վարիչ:

Երկրորդ որդին՝ Լեոն Քումանյանը, ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը և նույն ինստիտուտի ասպիրանտուրան: Այժմ աշխատում է նույն ինստիտուտում, որպես ավագ դասախոս: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է:

Կատարինե Արովյանի դուստրը՝ Կարինեն, ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, որտեղ և աշխատում է որպես կրտսեր գիտաշխատող:

Կոնստանտին Արովյանի կրտսեր զավակը՝ Վարդանը, ծնվել է 1910 թվականին Ալեքսանդրապոլում: Փոքր հասակից մեծ սեր է տածել երաժշտության և մաթեմատիկայի նկատմամբ: Նա ընտրում է ճարտարապետի մասնագիտությունը, որտեղ անհրաժեշտ էր ճշգրիտ գիտությունների հետ ղուգակցել գեղեցիկի զգացումը:

Գեոև՝ Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժնի ուսանող եղած տարիներին նա իր վրա է բեռում Ալեքսանդր Քամանյանի ուշադրությունը, որի պահանջով էլ ինստիտուտն ավարտելուց հետո մեկնում է Մոսկվա, կատարելագործվելու ակադեմիկոս Շչուսովի արվեստանոցում: 1937 թվականին վերադառնում է Երևան, մասնակցում նոր կառուցվող մայրաքաղաքի նախագծման աշխատանքներին: Նրա նախագծով է կառուցվել Երևանի արվեստի աշխատողների տունը, պետական հանրային գրադարանի ներքնամասը, սահմանապահի տունը, ինչպես նաև Արտաշատի շրջկենտրոնի ակումբը:

Ճարտարապետական աշխատանքին ղուգահեռ նա դասավանդում է Երևանի շինարարական տեխնիկումում: 29 տարեկան հասակում ողբերգական մահը կտրեց տաղանդավոր ճարտարապետի կյանքի թելը, թողնելով շիրագործված շատ մտահղացումներ և ծրագրեր:

Վարդանի ավագ դուստրը՝ Վիկտորյա Արովյանը, ծնվել է 1883 թվականին, Երևանում: 1903 թվականին ավարտել է Թիֆլիսի կանանց դիմնագիան: Հաջորդ տարին ընդունվել է Պետերբուրգի բնագիտական բարձրագույն դասընթացները: Սակայն ուսանողական հեղափոխական շարժումների պատճառով փակվում են այս դասընթացները: Վիկտորյան վերա-



դասնում է Քիֆլիս՝ մոր մտա: Առժամանակ հետո կանչ է քստանում՝ վերադառնալ Պետերբուրգ՝ ուսումը շարունակելու, բայց նյութական վատ վիճակը հնարավորություն չի տալիս Վիկտորյային այս անգամ, ինչպես նաև հետագայում, շարունակելու թերի թողած ուսումը:

1905 թվականին Վիկտորյան տեղափոխվում է Ալեքսանդրապոլ, որտեղ անցնում է մանկավարժական աշխատանքի, դասավանդում է ռուսերեն և բնագիտություն: 1912 թվականին նորից է վերադառնում Քիֆլիս: Դպրոցներում տեղ չի նկելու պատճառով մասնավոր դասեր է տալիս տանը: Քիֆլիսում եղած ժամանակ Վիկտորյան միաժամանակ հաճախում էր Զուբարովի, այսպես կոչված «ժողովունը»՝ որպես սիրող դերասանուհի:

Հարկ է նշել, որ թատրոնում ինքնու գերասանուհու հաջողությունները ակնառու են եղել հատկապես Երրվանդադի «Պատվի համարում»՝ Մարգարիտի դերում: Նույն թատրոնի կուլեկտիվի հետ 1919 թվականին գալիս է Երևան և բնակություն հաստատում այստեղ:

Սովետական Հայաստանում Վիկտորյա Վարդանովնան տարբեր տարիներ պաշտոնավարել է արդարագատությունների ժողովմատում, որպես գրասենյակի պետի տեղակալ, օրենսդրական բաժնում՝ քարտուղար, Հայկական հեռագրական գործակալությունում՝ թարգմանիչ, գյուղատնտեսական ինստիտուտում՝ գործավար և այլն: 1937 թվականից թոշակառու էր: Մահացել է 1978 թվականին:

Վիկտորյա Վարդանովնան ունեցել է մի տղա՝ էրիկա Արշավիրի Ծահլաթունի՝ ծնված 1907 թվականին: Կարելի է ասել, որ նա դավաճանում է ասեռ իրենց համար վերապահված ընտանիքին՝ մանկավարժությանը: Մեծ հաջողությամբ ավարտելով Քիֆլիսի Կիրովի անվան ինստիտուտը՝ նվիրվում է շինարարական գործին և նշանակվում շինարարական վարչության գլխավոր ինժեներ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին նա բոլորանվեր տրվում է սովետական երկրի պաշտպանության սուրբ գործին, և արժանանում շքանշանների ու մեդալների: Պատերազմից հետո էրիկը կրկին իր հարազատ տարերքի մեջ էր՝ կառուցներում: Եվ

շնորհալի շինարարին այս բնագավառում ևս արժանին է հատուցվում: Նա բաղմամբիվ պատվոգրեր ու շնորհակալագրեր է ստացել, իսկ Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի համալիրի կառուցման համար պարգևատրվել է Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով: 1961 թվականից էրիկա Ծահլաթունին աշխատում էր «Երևաննախագիծ» ինստիտուտում իբրև արհեստանոցի զբլխավոր մասնագետ: Մահացել է 1979 թվականին: Նրա երկու տղաներն էլ ծնվել, մեծացել և կրթվել են Երևանում: Մեծը՝ Վիկտորն, անվանի օդաչու է, ավիալայնների հրամանատար, փոքրը՝ Եվգենին, նախընտրել է մանկավարժությունը:

Վարդանի երկրորդ տղան՝ Լեոն Աբովյանը ծնվել է 1885 թվականին: Թեմական դպրոցն ավարտելուց հետո Լեոնը 1896 թվականին ընդունվում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Տասնամյա պատանու համար անսպասելի և ծանր հարված էր հոր մահը: Բայց նա կարողացավ հաղթահարել այդ վիշտը և ցուցաբերել լավ առաջադիմություն ուսման մեջ: Ճեմարանի ուսուցիչներն ու դասախարակները ամենօրյա հոգատություն էին ցուցաբերում նրա նկատմամբ, դրանց թվում էր նաև երիտասարդ, եռանդուն մանկավարժ Մանուկ Աբեղյանը:

Ճեմարանն ավարտում է 1902 թվականին և այլևս չի կարողանում շարունակել ուսումը: Նա ստիպված աշխատանքի է անցնում և, դրան զուգահեռ, ինքնուսուցման միջոցով ձրգտում է լրացնել ուսման պակասը՝ նվիրաբերելով իրեն լրագրողի և թարգմանչի տքնաշան աշխատանքին: 1904—1905 թվականներին նա աշխատում էր «Քիֆլիսսկին լիստի» օրաթերթում: Մեկ տարի բանակում ծառայելուց հետո նորից է վերադառնում սիրած աշխատանքին՝ այս անգամ արդեն «Ալիք» թերթում: Հետագայում աշխատում է նաև «Աղբյուր-Տարազ», «Քիֆլիսսկին լիստի» թերթերի խմբագրություններում:

Այս տարիներին Լեոն Աբովյանը մեծ հետաքրքրություն է ցուցաբերում թարգմանչական աշխատանքների նկատմամբ: Նա ոչ միայն նյութեր էր պատրաստում սուսերեն լույս տեսնող թերթերի համար՝ հայկական աղբյուրներից, այլ նաև

Քարգամանություններ էր կատարում ուսս գործների ստեղծագործություններից: Դեռևս 1904 թվականին նրա Քարգամանությունը լույս տեսավ Իվ. Նաժդիլինի «Տիրամոր մազը» պատմվածքը: Այնուհետև նա Քարգաման է Գոնչարովի «Երազիս տեսա ու կատարվեց» և Զուդերմանի «Նա ժպտում է» պատմվածքները:

1914—1918 թվականներին ծառայում է ցարական բանակի շարքերում: Զորացրվելուց հետո վերադառնում է Երևան և երկու տարի աշխատում Քանաքեռի մանկատանը, վարելով տնտեսական և դրասենյակային զանազան գործեր:

Սակայն կես Աբովյանի Քարգամանական ու պոլիգրաֆիական հմուտ աշխատողի ընդունակությունները ի հայտ են գալիս Հայաստանում, սովետական կարգեր հաստատվելուց հետո: 1921 թվականից մինչև 1951 թվականը անընդմեջ աշխատում է պոլիգրաֆ արդյունաբերության մեջ, որպես սրբապատկեր: 1928 թվականից աշխատանքի է անցնում Երևանում՝ նոր հիմնադրված երկրորդ տպարանում, ապա Քաղհրատում՝ որպես համեմատող և վերստուգող սրբապատկեր:

Լ. Աբովյանը միաժամանակ զբաղվել է Քարգամանական աշխատանքով: Նրա ձեռքով են ուսեսերենից հայերեն Քարգամանվել Վ. Ի. Լենինի նախ՝ երկու, ապա՝ վեց հատորով լույս տեսած ընտիր երկերի մի քանի զույգները, «Մոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» գիրքը, բացի 7, 8 և 11 զույգներից, Քարգաման է նաև «Կապիտալի» առթիվ Կ. Մարքսի և Ֆ. էնգելսի միմյանց դրած նամակները (մինչև 104-րդ նամակը), էնգելսի առանձին աշխատություններ, ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ ու դասազրկեր:

Կեսն Աբովյանը անտարբեր չի եղել իր պապի՝ Խաչատուր Աբովյանի գրական, հասարակական և մանկավարժական վաստակի նկատմամբ: Առանձնապես հետաքրքիր է աշակերտի մի զեպը: Ինչպես հայտնի է, դարի սկզբին Քաղվի հայկական կուլտուրական միության նախաձեռնությամբ պետք է կանգնեցվեր Խ. Աբովյանի արձանը, որն ըստ Հովհաննես Քումանյանի պետք է կերտվեր հանգանակությամբ հավաքված դուրմարով: Կեսն Աբովյանը մեծ հետաքրքրություն է հանդես բե-

րում այդ սրտաբուխ նախաձեռնությանը: Նա 1912 թվականի նոյեմբերի 22-ին մամուլում տղադրում է մի ընդարձակ հոդված, որտեղ շատ բարձր է գնահատում մեծ լուսավորչի հիշատակը հավերժացնող այդ քայլը: Ողջունելով այդ գեղեցիկ ու ազնիվ նախաձեռնությունը՝ նա միաժամանակ նշում է, որ Աբովյանի մեծությունը գնահատելու համար դա չի կարող բավարար համարվել: «Աբովյանի արձանը կերտելը ինքնին շատ ուրախալի երևույթ է,— նկատում է նա,— բայց առավել ուրախալին և արժեքավորը նրա ցաքուցրիվ ժառանգությունն է մի բերելն է, մշակելն ու հրատարակելը, Խաչատուր Աբովյանի գրական դեմքն իր ամբողջությամբ հայ հասարակայնության առաջ դնելը»: Այնուհետև նա կոչ է անում արովյանասեր հասարակայնությանը՝ իրենց ձեռքի տակ գտնվող ձեռագիր բոլոր նյութերը, նամակները, հուշերը հանձնել նրա ժառանգներին, որոնց մոտ էր գտնվում Աբովյանի արխիվը:


1839 թվականին նա մեծ սիրով սրբապատկեր ու համեմատել է «Աղասու խաղը», «Տիգրանի պատմությունը» և «Ամերիկու լիս քցիլը», որոնք պետք է մտնեին Խ. Աբովյանի «Անտիպերիկի» մեջ:

Կեսն Աբովյանը ակտիվ մասնակցություն է ունենում հայրենիքի պաշտպանության համար ձեռնարկվող միջոցառումներին: Նա մահացավ 1951 թվականին:

Կեսն Աբովյանի ավագ դուստրը՝ Ռուզաննան, ծնվել է 1909 թվականին Քիֆլիսում: Ավարտելով էջմիածնի միջնակարգ դպրոցը, շուրջ 35 տարի աշխատել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, որպես քարտուղար-գործավար, իսկ 1959 թվականից մինչև 1975 թվականը՝ ընդհանուր բժշի վարիչ: Այժմ անցել է կենսաթոշակի: Աշխատանքի վետերան է: Որպես ջանասեր աշխատող պարգևատրվել է մեդալներով և ընտրվել Երևանի Մյասնիկյանի շրջովետի պետատու Զավակները՝ Գուրգեն և Յուրի Հարությունյաններն ավարտել են պոլիտեխնիկական ինստիտուտը, ինժեներ-էլեկտրիկի մասնագիտությամբ:

Կեսն Աբովյանի երկրորդ դուստրը՝ Լուսիկ Աբովյանը, միջնակարգն ավարտելուց հետո հնարավորություն է ունենում ձեռք բերել տնտեսագետ-հաշվապահի մասնագիտություն և

2364



ծառայել է Երևանի տարրեր հիմնարկություններում: Այժմ թուշակառու է:

Լուսիկի երկու դուստրերը՝ Մարուսյան ու Զուլիխան, ազարտելով Երևանի պետական համալսարանի կենսաբանական և քիմիական բաժինները, այժմ աշխատում են: Մարուսյան աշխատում է էջմիածնի № 11 պրոֆեսիոնիկական ուսումնարանում, իսկ Զուլիխան էջմիածնի պահածոների գործարանում՝ քիմիայի լաբորատորիայի վարիչ է:

Բարկեն Լևոնի Աբովյանը հոր նման, տնտեսական աննպաստ պայմանների պատճառով չի ստացել սիստեմատիկ կրթություն, սակայն նա աշխատանքային գործունեությանը զուգահեռ հեռակա ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ավտոճանապարհային բաժինը: Աշխատել է ավտոճանապարհաշինարարական ձեռնարկություններում, աշխղեկից մինչև գլխավոր ինժեների պաշտոնով: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, պարգևատրվել մի շարք մեդալներով և շքանշաններով: ՍՍՀՄ պատվավոր շինարար է: Ներկայումս ավտոճանապարհների շինարարության և շահագործման մինիստրության նախագծային բյուրոյում աշխատում է որպես ինժեներ:


Իր կնոջ՝ Նինայի հետ, դաստիարակել և մեծացրել են դուստրերին՝ Վիտեային, Անահիտին և որդուն՝ Լևոնին:

Ատոմ Աբովյանը, Լևոն Աբովյանի կրտսեր զավակը, ծնվել է 1918 թվականին: Ավարտելով Երևանի հիգրոմետիորատիվ տեխնիկումը 1939 թվականին՝ զորակոչվում է կարմիր բանակի շարքերը, այնուհետև սկսվում է Հայրենական մեծ պատերազմը և 1943 թվականին երկու ստրից վիրավոր վերադառնում է տուն: Այժմ աշխատում է «Սոցուլէլեկտրաշին» վարչությունում:

Ատոմ Աբովյանն ունի երկու դուստր և մեկ տղա՝ Վիկտորյա, Գայանե և մեծ պապի անվանակիրը՝ Խաչատուր:

\* \* \*



Վարդան Աբովյանի երրորդ տղան՝ Աշոտ Աբովյանը, ծնվել է 1890 թվականին: Ինք տարեկան հասակում բնդունվում






Խ. Աբովյանի կինը՝ Էմիլիեն

Խ. Աբովյանի տուն-բանգարանը



Խ. Աբովյանի ստեփանոս



Զարմանգոլխտ Արովյանի ընտանիք




Վարդան Արովյանի ընտանիք



Վ. Արվյանի աղան և բառները



Խ. Արվյանի բառներն ու ծոռները



Խ. Աբովյանի անվան պուրակը

է Լազարյան ճեմարանը և 1908 թվականին ավարտում նրա գիմնազիական բաժնի լրիվ դասընթացը: Այնուհետև ընդունվում է Մոսկվայի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական բաժինը և ավարտում 1915 թվականին: Նորավարտ Աշոտ Աբովյանին կանչում են ցարական բանակ և ուղարկում Արևմտյան ճակատ: Պատերազմի խրամատներում նա հիվանդանում է սուր ունևորվածով և զորացրվում: Սակայն տուներաճի ճանապարհին ևս Աշոտին ուղեկցում է անհաջողությամբ, նա անհետանում է՝ չհասած Հյուսիսային Կովկաս: Երկու տարի հետո միայն, 1919 թվականի վերջերին, մոր՝ Կատարինե Աբովյանի անունով ոչ պաշտոնական մի թուղթ է գալիս Արմավիրից, որով հայտնվում է, որ Աշոտը զոհվել է նեխնոմիակ սասանցիայի մոտ և թաղված է նույն տեղի եղբայրական դերեղմանոցում:

\* \* \*

Խ. Աբովյանի ամենից փոքր թոռը Շուշանիկն է, որը ծնվել է հոր՝ Վարդանի, մահվանից մեկ տարի առաջ, էջմիածնում: Քաղցն ու զրկանքները, անորոշ տեղափոխությունները, դժվարին կյանքն է եղել նրան ուղեկից: Այդ պատճառով էլ գիմնազիական դասընթացների տարիներին ճակատագրի բերումով եղել է Երևանում, Քիֆլիսում, Ալեքսանդրապոլում, ապա նորից Քիֆլիսում: 1912 թվականին ավարտում է Քիֆլիսի կանանց գիմնազիայի լրիվ դասընթացը և ստանում ուսուցչուհու կոչում: Նույն թվականին ընդունվում է Մանթաշոքի առևտրական դպրոցը, որտեղ աշխատում է մինչև 1921 թվականը որպես ուսուցչուհի: 1921 թվականին ամուսնու հետ տեղափոխվում է Մոսկվա: Այնտեղ դառնում ավելի քան 35 տարիների ընթացքում կատարում է պլանավորող անասագետի պաշտոն տարբեր միխասուրություններում ու գերատեսչություններում:

1957 թվականից Շուշանիկ Աբովյանն անցել է կենսաբանական Մահացել է 1980 թվականին:

## ԶԱՐՄԱՆԴՈՒՆՏԻ ՃՅՈՒՂԸ

Բոլորովին այլ կերպ է դասավորվում եռաշատուր Աբովյանի դատեր՝ Զարմանդուխտի (Աղեկախալի) կյանքը: Հինգ տարեկան էր նա, երբ զրկվեց հորից: Ավարտելով Երևանի կանանց գիմնազիան՝ Զարմանդուխտը շուտով ամուսնանում է Երևանում հարկահավաքի պաշտոնով աշխատող Գրիգորի Յակովլևիչ Բոժովսկու հետ: Ունենում են հինգ դավակ՝ շորս աղջիկ և մեկ տղա:

Զարմանդուխտի ամուսինը՝ Գրիգորի Յակովլևիչը, ապրել է մինչև 1906 թվականը: Նա հիվանդ, հաշմանդամ մարդ էր և երեխաների խնամքն ու դաստիարակությունը մեծ կարիքի և զրկանքների պայմաններում կատարում է Զարմանդուխտը:

Զարմանդուխտի միակ տղան՝ Վլադիմիր Բոժովսկին, բնատանիքի ամենափոքրն էր: Սակայն հետագայում ստացվեց այնպես, որ մոր և իրենից մեծ քույրերի ու նրանց երեխաների միակ խնամատարն ու հոգացողը ինքը եղավ: Վլադիմիրը շատ էր կապված մոր հետ, նա բարձր էր գնահատում մոր բացառիկ ջանքերը երեխաների ուսուցման ու դաստիարակության գործում: Իր հերթին ջանք չէր խնայում երախտահատույց լինելու մորը, որն ապրեց 66 տարի և մահացավ 1909 թվականին Քիֆլիսում:

\* \* \*

Վլադիմիր Գրիգորևիչ Բոժովսկին ծնվել է 1874 թվականին, հունիսի 27-ին, Երևանում: Հաջողությամբ ավարտելով Երևանի դասական գիմնազիան՝ 1895 թվականին բնդունվում է Պետերբուրգի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Սակայն զղալով, որ հարկ է հետևելու իր կուլմանը, հաջորդ տարին բնդունվում է զինվորական բժշկական ակադեմիա: Ահա այստեղ Վլադիմիր Գրիգորևիչը իր տարերքի մեջ է և շուտով ցուցաբերում է արտասովոր բնզունակություններ բժշկական գիտությունների բնագավառում: Դեռևս

ակադեմիայի 5-րդ կուրսի ուսանող պարզևատրվում է ոսկե մեդալով՝ արտակարգ բարձր մակարդակով գրված գիտական ուսումնասիրության համար, որը կոչվում էր «Կենդանի հյուսվածքների վերաբերմունքը շեղոք կարմիր ներկի նկատմամբ», որի համար և նրան շնորհվում է բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան: Ավարտելով ակադեմիան՝ 1902 թվականին Վ. Բոժովսկին մրցույթով մտնում է պրոֆեսոր Յանովսկու կողմից զեկավարվող ներքին հիվանդությունների կլինիկայում, որպես օրդինատոր: 1906 թվականին, 32-ամյա Վլադիմիր Բոժովսկին փալլուն կերպով պաշտպանում և ստանում է բժշկական գիտությունների դոկտորի աստիճան՝ ժամանակի բուժական աշխարհին հուզող, «Ակտիվ և պատիվ արյունազեղման ժամանակ արյան ճնշման վիճակի կլինիկական դիտարկումը» աշխատության համար:

Լինելով բժշկական ակադեմիայի օրդինատոր՝ Բոժովսկին չի սահմանափակվում գիտության զոկտորի համար իր նախընտրած թեմայով: Այս տարիներին էր, որ բոս ամենայնի խորացավ թերապիայի՝ բժշկության ընդարձակ բնագավառի մեջ: Նա հանդես եկավ մի քանի հոլվածներով, որոնք վերաբերում էին արյան ճնշմանը, բժշկության կլինիկական դասավանդմանը, թոքային հիվանդություններին և այլն:

Սակայն մոր և քույրերի նյութական վիճակը հարկադրեցին Բոժովսկուն թողնել Պետերբուրգը և տեղափոխվել Քիֆլիս: Շուրջ 20 տարի նա ապրում և աշխատում էր Քիֆլիսում: Նրա նախաձեռնությամբ է հիմնադրվել Քիֆլիսի կանանց բարձրագույն դասընթացները, որը հետագայում վերանվանվեց Անդրկովկասյան համալսարան: Այդ դասընթացներում նա էր կարգում Ֆիզիոլոգիայի դասախոսությունները, որոնք հետագայում հրատարակվեցին որպես դասագիրք:

1964 թվականին Վրաստանի բուժական հասարակայնությունը հանդիսավորությամբ նշեց Վ. Գ. Բոժովսկու ծննդյան 90-ամյակը, և իրավամբ նրան մեծարեց որպես Վրաստանի բուժական բնագավառի էնտոլոգիաստի: Քիֆլիսյան տարիներին են վերաբերում Վ. Բոժովսկու ավելի քան 20 անուն գի-



տական աշխատությունները, որոնք հրատարակվել են «Արա-  
շերնայա զազետա», Տրուդի կավկազսկոզո օբչեստվա»,  
«Ռուսկի վրաչ» և այլ հանդեսներում, ինչպես նաև արտա-  
սահմանում: Նրա գիտական աշխատությունները լայնորեն  
օգտագործվում էին և՛ դասախոսությունների ժամանակ, և՛  
բուժական պրակտիկայում: Գեուևս 1910 թվականին Բոժով-  
սկին մեկնում է արտասահման՝ գիտական գործուղման և  
հնարավորություն է ստանում մոտիկից ծանոթանալու Գեր-  
մանիայի, Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի և  
Շվեյցարիայի գիտաբժշկական մտքին:

Երկար տարիներ լինելով Քիֆլիսում՝ Բոժովսկին բարե-  
կամական շերմ կապերի մեջ էր իր մորեղբոր (Վարդանի)  
տիկնոջ, տղաների և աղջիկների հետ, ավելին, Կոնստանտին  
և Լևոն Արովյանների սրտակից բարեկամն էր: Այցի էր գնում  
նրանց Ալեքսանդրապոլում, էջմիածնում և Երևանում եղած  
տարիներին: Լինելով Երևանում՝ հարմար առիթը բաց չէր  
թողնում Քանաքեռ՝ պապենական տուն այցելելու:

1922-1924 թվականներին պրոֆեսոր Բոժովսկին ղեկա-  
վարում էր Յարոսլավսկի համալսարանի ֆակուլտատիվ  
թերապիայի և պաթոլոգիական անատոմիայի ամբիոն-  
ները:

1928 թվականից Վ. Բոժովսկին նորից Կովկասում էր:  
Յոթը տարի նա աշխատում է Միներալնիե Վոդի քաղաքի ա-  
ռողջարաններում, որպես կոնսուլտանտ՝ միաժամանակ հա-  
մասնակցելով նալչիկի մարզային հիվանդանոցի թերապիայի և  
ինֆեկցիոն բաժինների ղեկավարի աշխատանքը:

1936 թվականին Բոժովսկին ընտրվում է Դաղստանի պե-  
տական բժշկական ինստիտուտի ղիագնոստիկայի և մասնա-  
վոր պաթոլոգիայի ամբիոնների վարիչ, որը զլիտվորում է  
մինչև 1951 թվականը: Ինչպես ամենուրեք, այնպես էլ Մա-  
խաչկալայում եղած տարիներին նա զբաղվում է իրեն որպես  
բարձր որակավորման մասնագետ, հմուտ կազմակերպիչ,  
փորձված մանկավարժ ու գիտնական: Երկար տարիներ ղե-  
կավարել է Դաղստանի բուժական միտքը: Մենդելյան 70-ամ-  
յակի օրը Դաղստանի ինքնավար հանրապետության Գերա-

գույն սովետը նրան շնորհում է գիտությունների վաստակա-  
վոր գործչի կոչում:

Բոժովսկու գրչին են պատկանում 47 սնուն գիտական  
աշխատություններ, առանձին գրքերով կամ հոդվածների  
ձևով:

Վ. Բոժովսկին մահացել է 1951 թվականի գեկտեմբերին,  
Մախաչկալայում:

Հարուստ ու իմաստալից ապրած իր կյանքում Վ. Բոժով-  
սկին եղել է նաև լավ հայր, հոգատար ու խստապահանջ ծը-  
նող: Նա ունեցել է 9 երեխա, 7 աղջիկ և երկու տղա: Երեխա-  
ներից 5-ը մահացել են մանուկ հասակում, մեծ տղան ապրել  
է 45 տարի, իսկ երեք աղջիկները՝ Ադելաիդան (սրբ վաղուց  
է մահացել), Գալինան ու Իրինան, ապրում են մինչև օրս:

Երեխաներից ավագը, տղան՝ Գեորգի Բոժովսկին, ծնվել է  
Քիֆլիսում: Միջնակարգ կրթությունը ստանում է տեղում,  
իսկ 1928 թվականին ավարտում է Մոսկվայի առաջին բժշ-  
կական ինստիտուտը: Վիրաբուժության մեջ ցուցաբերած  
բարձր ընդունակությունների համար մնում է ինստիտուտում  
պրոֆ. Կոնչալովսկու մոտ, որպես ասիստենտ: Հետագայում  
Գ. Բոժովսկին Միոթյան տարբեր վայրերում կատարում է  
վիրաբույժի պարտականություններ, հերոսական «Սեղով»  
սանցահատի անձնակազմի հետ որպես բժիշկ մասնակցում է  
Հյուսիսային բևեռային ծովի ուսումնասիրությանը՝ երկար  
ժամանակ ապրելով «Սևգինենիե» կղզու վրա: 1941-1945  
թվականներին քաջաբար մարտնչում է Հայրենական պատե-  
րազմի տարբեր ռազմաճակատներում: Պատերազմի ավար-  
տից անմիջապես հետո Գեորգի Վլադիմիրովիչը կուսակցու-  
թյան կոչով մեկնում է Ցակուտսկ՝ բժշկական աշխատան-  
քի, որտեղ և 1948 թվականին մահանում է սրտի կաթվա-  
ծից:

Վ. Բոժովսկու ավագ զուստրը՝ Ադելաիդան, ծնվել է 1906  
թվականին Քիֆլիսում: Երկար ժամանակ ապրել է Լենինգրա-  
դում: Մահացել է 1979 թվականին:

Գալինան ծնվել է 1914 թվականին: Գեուևս զպրոցական

հասակում ստանալով անբուժելի հիվանդություն՝ չի կարողանում շարունակել կրթությունը և մնում է հոր խնամքի տակ: Այժմ թողափառու է, ապրում է Մախաչկալայում:

Վ. Բոժովսկու կրտսեր դուստրը Իրինան է, ծնվել է 1924 թվականին:

1946 թվականին Իրինա Վլադիմիրովնան գերագանց առաջադիմությամբ ավարտում է Դաղստանի պետական բժշկական ինստիտուտը և մնում ինստիտուտի ներքին հիվանդությունների ամբիոնում որպես օրգինատոր: 1949 թվականին օրգինատուրան ավարտելուց հետո աշխատում է Կասպիցսկ, Աստրախան, Լուցկ և Վոլինսկ քաղաքներում: Պրակտիկ բուժական աշխատանքների հետ միասին նա կատարում է նաև գիտական որոնումներ, որոնց արդյունքը քսանից ավելի ուսումնասիրություններն ու աշխատություններն են: 1964 թվականից գիտությունը թեկնածու է: Բժշկական կադրերի պատրաստման գործում աչքի են կնոջ ծառայությունների համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության կողմից պարգևատրվել է «Աշխատանքային արիության համար» մեդալով, բազմիցս պարգևատրվել է նաև ՌՍՖՍՀ առողջապահության մինիստրության կողմից:

1967 թվականին մրցույթով ընտրվել է Ստավրոպոլի բժշկական ինստիտուտի ղեկնա: Այժմ բժշկական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Իրինա Վլադիմիրովնա Բոժովսկայան նույն ինստիտուտի հոսպիտալային թերապիայի ամբիոնի վարիչն է: Նա ունի երկու դուստր, Օլգան և Տատյանան: Երկուսն էլ ավարտել են Ստավրոպոլի բժշկական ինստիտուտը և աշխատում են քաղաքի տարբեր կլինիկաներում:

Զարմանդուխտի մյուս դուստրերի կյանքը դասավորվել է տարբեր ձևով և լի է անակնկալներով:

Զարմանդուխտի ավագ դուստրը՝ Օլգան, ծնվել և մեծացել է Երևանում: Ավարտելով տեղի կանանց գիմնազիան, նա ամուսնանում է զինվորական ծառայող Կուրոլիցկու հետ: Ամուսինը մահանում է երիտասարդ հասակում՝ թողնելով կնոջը երեք փոքրահասակ աղջիկների հետ: Սակայն տիֆի համաճարակը չի խնայում Օլգայի դուստրերին: Դժբախտ կինը մնում է մոր հետ և մահանում է 1906 թվականին:

Զարմանդուխտի երկրորդ դուստր Ճակատագիրը նման է առաջինին: Յուլիանան նույնպես ծնվում, մեծանում և սովորում է Երևանում, ամուսնանում է Մալևսկի աղջանունով մի զինվորականի հետ: Սակայն ճակատագիրն ավելի դժժան է գտնվում Յուլիանայի նկատմամբ: Մեկ օրվա ընթացքում խուլերիայի համաճարակից մահանում են նրա միակ դուստրը և ամուսինը: Զղիմանալով կյանքի հարվածներին, նա հոգեկան ծանր հիվանդություն է ստանում և տեղափոխվում Թիֆլիս, որտեղ ապրում էր եղբայրը: Յուլիանան մահացել է 1917 թվականին:

Զարմանդուխտի դուստրերից իմաստալից ու երջանիկ կյանք է ունեցել Զինաիդան, նա ծնվել է Երևանում 1872 թվականին: Երևանի կանանց գիմնազիան ավարտելուց հետո, Զինաիդան նշանակվում է Փարաքարի դպրոցում՝ ուսուցչուհի: Այստեղ էր աշխատում նաև Մատվեյ Ռոժկովը, որը դասավանդում էր ռուսաց լեզու: 1888 թվականին Զինաիդան և Մատվեյը ամուսնանում են և նույն ուսումնական տարում աշխատանքի են նշանակվում Կաղզվան քաղաքում: Երկու տարի հետո, մոր՝ Զարմանդուխտի խնդրանքով նրանք տեղափոխվում են Երևան, որտեղ և շարունակում են ապրել ու աշխատել մինչև 1917 թվականը: Զինաիդա և Մատվեյ Ռոժկովները իրարից չեն զրկվում և մեծ ու համերաշխ ընտանիք: Արդեն 1904 թվականին նրանք ունենին հինգ տղա և մեկ աղջիկ, որոնք ապրեցին ժողովրդին ծառայելու անձնուրաց նվիրումով:

Զինաիդայի առջնեկը Միխայիլ Ռոժկովն էր: Նա ծնվել է 1889 թվականին Կարսի նահանգի Կաղզվան քաղաքում: Ավելի քան վաթսուն տարի հետո Միխայիլ Մատվեյից հետևելու կերպ է հիշում իր մանկությունը, — «ժանր ու անլուսաշող էր գյուղական ուսուցչի կյանքը ցարական Ռուսաստանում: Մանուկ հասակից ծնողներս դաստիարակում էին իմ մեջ աշխատանքային ունակություններ, և սկսած 13 տարեկանից օգնում էի ծնողներին՝ կատարելով դասուսույցի պարտականությունները»:

1907 թվականին ավարտելով Երևանի դասական դիմնա-  
զիան նա ընդունվում է Խարկովի Համալսարանի ֆիզիկամա-  
թեմատիկական բաժինը: Ուսումնառենը պատանին սովորե-  
լուն զուգահեռ դասեր է տալիս Խարկովի տարբեր դպրոցնե-  
րում և հոգում ուսանողի իր անհրաժեշտ կարիքները, թեթե-  
վացնելով ծնողների հոգսը: 1913 թվականին ավարտելով Հա-  
մալսարանը՝ աշխատանքի է նշանակվում Կրասնոդարի երկ-  
րամասի Պոլտավկա ստանիցայի (ներկայիս Կրասնոարմեյսկ)  
ուսուցչական սեմինարիայում որպես ֆիզիկայի և մաթեմա-  
տիկայի դասատու: Մանուկների աշխարհը Միխայիլ Ռոժկովի  
ամենասրտաճած բնագավառն էր, որին և անդամաճանորեն  
նվիրաբերեց իր կյանքն անմնացորդ: Շուրջ հիսուն աշ-  
խատանքային տարիների ընթացքում, բացի ուսուցչական սե-  
մինարիայից, նա ֆիզիկայի ու մաթեմատիկայի դասերին  
զուգահեռ զարցի դիրեկտորի պաշտոն է վարել Արինսկի,  
Կոնեսկի ու Եյսկ քաղաքի միջնակարգ դպրոցներում:

Հմուտ մանկավարժը չէր սահմանափակվում միայն բու-  
սանձնած առարկաների դասավանդումով: Նա միաժամանակ  
Եյսկ քաղաքի ժողկրթության բաժնի մեթոդիավորման դե-  
կավարն էր և ուսուցիչների հեռակա ուսուցման կազմակեր-  
պիչը: Հեռակա սովորող ուսուցիչների հետ կատարած ջա-  
նասեր աշխատանքի համար դեռևս 1936 թվականին Կրասնո-  
դարի երկրամասի ժողկրթբաժինը նրան շնորհում է հարվա-  
ծայինի կոչում:

Բարձր գնահատելով Մ. Ռոժկովի ծառայությունները մա-  
տաղ սերնդի ուսուցման ու դաստիարակության գործում և  
հասարակական աշխատանքներում ցուցաբերած ակտիվու-  
թյան համար 1939 թվականին ՍՍՀՄ Գերագույն սովետը նը-  
րան պարգևատրում է «Աշխատանքային գերազանցության  
համար» մեդալով:

Միխայիլ Ռոժկովը չէր բավարարվում ձեռք բերածով: Նա  
ակտիվորեն մասնակցում է հասարակական կյանքին, ղեկու-  
ցումներով և դասախոսություններով հանդես գալիս Եյսկ  
քաղաքի մտավորականության և մոտակա գյուղերի աշխա-

տավորության առջև՝ գիտության ու տեխնիկայի նոր նվա-  
ճումների մասին: Ահա թե ինչու 1944 թվականին ՍՍՀՄ Գե-  
րագույն սովետի հրամանագրով նա պարգևատրվում է «Պատ-  
վո նշան» շքանշանով, իսկ 1955 թվականին՝ «Աշխատանքա-  
յին կարմիր դրոշի» շքանշանով:

Հայրենական պատերազմի տարիներին նա ջանք չէր  
խնայում հայրենիքի պաշտպանության սուրբ գործի համար,  
իսկ երբ թշնամին խցկվեց Կուբանի տերիտորիան, նա հրա-  
ցանք ձեռքին մարանչում էր որպես պարտիզան:

Միխայիլ Ռոժկովը մահացել է 1958 թվականին:

Միխայիլ Մատվեևիչ Ռոժկովն իր կնոջ՝ Լիդիա Ռոժկովա-  
չի հետ դաստիարակել և մեծացրել են երկու զավակ: Տղան՝  
Նվզենի Ռոժկովը, ներկայումս բնակվում է Եյսկ քաղաքում և  
աշխատում նավավերանորոգման գործարանում, զուտորը՝  
Լյուդմիլա Ռոժկովան բժշկուհի էր մինչև 1979 թվականը,  
ապրում և աշխատում էր Գրիմի մարզի Սիմֆերոպոլի շրջա-  
նի նիկոլաևկա գյուղում: Մահացել է 1979 թվականին:

1892 թվականին ծնվում է Զինաիդայի երկրորդ տղան՝  
Կոնստանտինը: Ավարտելով Երևանի դասական գիմնազիան՝  
ընդունվում է Կազանի համալսարանի բժշկական ֆակուլտե-  
տը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նա  
բժշկի կոչումով կանչվում է ցարական բանակ: 1917 թվակա-  
նին Կոնստանտին Մատվեևիչը ընդունվում է Ռուսաստանի  
սոցիալ-դեմոկրատական բանվորական (բոլշևիկյան) կու-  
սակցության շարքերը: Նա երիտասարդ սովետական հանրա-  
պետության առողջապահական գործի առաջին կազմակեր-  
պիչներից մեկն է: Քաղաքացիական պատերազմից հետո  
Կոնստանտին Ռոժկովը գործուղվում է Ռոստով, որտեղ աշ-  
խատում է որպես Կովկասյան երկրամասի առողջապահական  
բաժնի վարիչ: Այնուհետև Միոթյան տարբեր քաղաքներում  
աշխատում է որպես բժիշկ: Մահացել է 1954 թվականին Մո-  
խաշկայայում:

Կոնստանտին Ռոժկովի միակ ազջիկը՝ Ելենան, ծնվել է  
1925 թվականին, Լենինգրադում: Տեղում ստանալով միջնա-  
կարգ կրթություն՝ 1949 թվականին ավարտում է Լենինգրադի

Պալլոսի անվան առաջին բժշկական ինստիտուտը: Եվ ինք տարի հետո փառալուծ գիտերտացիա է պաշտպանում և ըստանում բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան: Ներկայումս Նլենա Ռոժկովան աշխատում է ՄՍՄՄ գիտությունների ակադեմիայի Լենինգրադի ֆիզիոլոգիայի և բիոքիմիայի գիտահետազոտական ինստիտուտում որպես ավագ գիտական աշխատող: Նա հեղինակ է 38 անուն գիտական աշխատությունների, որոնցից 7-ը տպագրված են արտասահմանում՝ անգլերեն լեզվով, այդ թվում ընդարձակ մի ակնարկ նվիրված աննելիղների խոլիներգիկ կառուցվածքների դեղաբանությունը: Նրա գիտական հետաքրքրությունների բնագավառը կենտրոնական նյարդային համակարգի դեղաբանությունն է:

1965 թվականին մասնակցում է Երևանում կայացած Սովետական Միության ֆիզիոլոգների X համագումարի աշխատանքներին և օգտվելով հանձնի առիթից, այցելում այն տունը, որտեղ ծնվել ու մեծացել էր իր պապը՝ Խաչատուր Աբովյանը:

Նլենա Ռոժկովայի աղան՝ Նիկոլայը (1955թ.) ավարտել է Լենինգրադի պետական համալսարանը, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է և դասավանդում է քաղաքի բուհերից մեկում:

Գիտական և պրակտիկ հարուստ կյանք է ապրել Զարմանդոխտի երրորդ թոռը՝ Վլադիմիր Մատվեևիչ Ռոժկովը: Տասնութ տարեկան հասակում՝ 1911 թվականին, ոսկե մեդալով ավարտելով Երևանի գիմնազիան, ընդունվում է Պետերբուրգի գինվորական բժշկական ակադեմիա: Որոշ ընդմիջումներով, 1917 թվականին ոսկե մեդալով ավարտում է ակադեմիան ու կանչվում ցարական բանակ: Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից անմիջապես հետո նա բանվորագյուղացիական բանակի շարքերում ծառայում է որպես բրգիչ: 1925 թվականին Վլադիմիր Ռոժկովը աշխատանքի է սուղարկվում ռազմաբժշկական ակադեմիայի քիմիայի ամբիոնը, որտեղ հնարավորություն է ստանում դասախոսական

աշխատանքին զուգահեռ զբաղվելու նաև գիտական աշխատանքով:

Առանձնապես գիտահետազոտական բեղմնավոր աշխատանք է կատարում Վլադիմիր Մատվեևիչը 1930 թվականից սկսած, երբ, զորացրվելով բանակից, աշխատանքի է անցնում ակադեմիկոս Պալլոսի անվան Լենինգրադի գիտահետազոտական ինստիտուտում: Հինգ տարի հետո նրան շնորհվում է (առանց պաշտպանելու) բժշկական գիտությունների թեկնածուի աստիճանը:

Պատերազմի տարիներին նա ղեկավարում է ռազմաբժշկական ծովային ակադեմիայի թունագիտության ֆակուլտետը, բժշկական ծառայությունների գնդապետի կոչումով: Հայրենական պատերազմի ավարտից հետո Վ. Մ. Ռոժկովն աշխատանքի է անցնում Լենինգրադի երկրորդ բժշկական ինստիտուտում, որտեղ տասնմեկ տարի ղեկավարում է դարձյալ թունագիտական ֆակուլտետը: «Մեթանոլ պաթոլոգիան, կլինիկան և թերապիան» հետազոտության համար նրան շքանորհվում է գիտությունների դոկտորի աստիճան:

Ակտիվ հասարակական գործիչ, տաղանդավոր կազմակերպիչ ու անձնական հմայքի տեր մանկավարժ-դասախոս, բժախնդրության հասնող պահանջկոտ գիտնական, — ահա բնավորության այն դժերը, որոնք յուրահատուկ էին Վլադիմիր Ռոժկովին: Նրա գիտական որոնումների արդյունքն են 41 անուն գիտական աշխատությունները և բարձրագույն դպրոցների համար կազմված ձեռնարկները, նա մահացավ 1956 թվականին:

Վլադիմիր Ռոժկովը ունեցել է մեկ զավակ՝ Գեորգի Ժեմալտիսը, որի հարուստ ապրած կյանքը նման չի եղել Զարմանդոխտի ճյուղի ծառանգների ապրած կյանքին, սակայն յուրատեսակ հետաքրքրություն է ներկայացնում մեծ լուսավորչի առհամառոտ ուսումնասիրողների համար:

Նրա հայրը Պետերբուրգի գինվորական բժշկական ակադեմիայում ուսանելու ժամանակ ամուսնանում է Կառնասից կայսերական մայրաքաղաք եկած մարքսիստ-հեղափոխական Նելլի Ժեմալտիսի հետ, որը սովորում էր Լեսգավտի անվան ինստիտուտում: Սկսվում է առաջին համաշխարհային պա-

ակրազմբ: Գեո աղագեմիան շավարտած, նրան ուղարկում են սաղմաճակատ: Նեղի ժեմայտինն քանի որ հետապնդվում էր ցարական դադունի ծառայության կողմից, տեղափոխվում է Շվեյցարիա:

1915 թվականի հունվարի 29-ին այստեղ էլ ծնվում է նրանց զավակը՝ Գեորգին, որի ազգանունը կոնսպիրատիվ նպատակներով դարձնում են մայրականը՝ ժեմայտիս:

Ժեմայտինն Նեղի Գեորգիենան հայրենիք է վերադառնում քառնական թվականներին և բնակություն է հաստատում Ղրիմում: Հետագայում նա տեղափոխվում է Կառնաս, աշխատում տարբեր նախադպրոցական հիմնարկներում: Մահացել է 1958 թվականին Կառնասում: Նա կուսակցական էր 1910 թվականից:

1929 թվականին Գ. Վ. ժեմայտիսը ընդունվում է Սևաստոպոլի պրոֆտեխնիկական ուսումնարանը: 1934 թվականին կոմերիամիտիայի ուղեգրով ընդունվում է Մոսկվայի երկաթուղային տրանսպորտի ինստիտուտը, որն ավարտում է գերագանց առաջադիմությամբ: Երիտասարդ ինժեները աշխատանքի է գործուղվում Գորկու երկաթուղային հանգույցը, այնուհետև մի շարք պաշտոններ վարում Հյուսիս-Պեչորյան երկաթուղու շինարարության ասպարեզում:

1940 թվականին Գ. Վ. ժեմայտիսը գորակազմում է սովետական բանակի՝ նա կրտսեր սպաների դասընթացներում էր, երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Ավարտելով դասընթացները, մեկնում է գործող բանակ, նշանակվում սակրավորների դասակի, ապա վաշտի հրամանատարի պաշտոններում, այնուհետև ղեկավարում կիտվական դիվիզիայի № 93 հատուկ սակրավորների գումարտակը: Մարտնչել է Բրյանսկի, Լենինգրադյան և Մերձբալթյան ռազմաճակատներում: 1943 թվականին ծանր վիրավորվում է: Պատերազմի այդ օրերին էլ նա ընդունվում է ՍՄԿԿ շարքերը:

1944 թվականին գորացրվելով բանակից, Գ. ժեմայտիսը աշխատանքի է անցնում կիտվայում և շուտով դառնում հանրապետության երկաթուղու շահագործման վարչության պետ: 1947 թվականին գործուղվում է Մոսկվա՝ երկաթուղային

տրանսպորտի աղագեմիայում սովորելու, որը նույնպես ավարտում է գերագանց առաջադիմությամբ: Այնուհետև Գ. ժեմայտիսը ղեկավար աշխատանքներ է վարում կիտվական ՍՍՀ-ում: Նա մերձբալթյան երկաթուղու պետի տեղակալն էր, միաժամանակ Վիլնյուսի երկաթուղային հանգույցի պետը:

Ինչպես Մեծ հայրենականի, այնպես էլ խաղաղ տարիներին կատարած անբասիր ծառայությունների համար նա պարգևատրվել է 18 շքանշաններով ու մեդալներով: Շուրջ 20 տարի բնակվել է կիտվական ՍՍՀ Գերագույն սովետի գեպուտատ և հանրապետության կոմկուսի Կենտկոմի անդամ:

Կիտվայի պատվավոր երկաթուղայինը հասարակական կարգով երկաթուղայինների թանգարան է հիմնում և ղեկավարում մինչև իր կյանքի վերջը՝ 1983 թվականը: Այժմ նրա կինը, երկու որդին և դուստրը ապրում են մոր հետ:

Ջինաիդայի յորրորդ տղայի՝ Նիկոլայ Ռոժկովի կյանքի սկիզբը շատ նման է մյուսներին, ծնվել է մեծացել և միջնակարգ կրթություն է ստացել Երևանում: Նա նույնպես ավարտել է Պետերբուրգի դինվորական բժշկական աղագեմիան: Սակայն բոլորովին երիտասարդ Նիկոլայը անհայտ կորչում է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Զավակներ չի ունեցել:

Խ. Արովյանի հինգերորդ ծուր՝ Ջինաիդայի միակ դուստրը՝ Լյուրով Մատվենան Ռոժկովան, ծնվել է Երևանում, 1902 թվականին: 1927 թվականին ավարտել է Կուրանի բժշկական ինստիտուտը, Հինգ տարվա պրակտիկ աշխատանքից հետո ընդունվում է Լենինգրադի ատամնաբուժական ինստիտուտի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո, նույն տեղում մնում է դասախոսական աշխատանքի: 1934 թվականից Լյուրով Մատվենան վարում է ատամնաբուժական ամբիոնի ասիստենտի պաշտոն: Առաջին օրվանից մինչև վերջ մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

1945 թվականին Լյուրով Ռոժկովան, զորացրվելով սովետական բանակից, կրկին գիտական աշխատանքի է անցնում

Լենինգրադի ասամնարուժական ինստիտուտում: 1950 թվականին պաշտպանում և ստանում է բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան: Նրա գրչին են պատկանում 27 գիտական աշխատություններ, որոնց մեծ մասը տպագրվել է տարբեր հանդեսներում:

1958 թվականից կյուրով Մատվենյան թոշակի է անցել և բնակվում է Լենինգրադում:

Զինաիդայի հինգերորդ տղան՝ Վալենտին Ռոժկովը ևս ծնվել է Երևանում, 1904 թվականին: Ավարտելով Լենինգրադի ռազմարժշկական ակադեմիան, Վալենտին Մատվենիչ Ռոժկովն իր ամբողջ կյանքը նվիրում է հայրենիքին ծառայելու մեծ գործին, աշխատում է սովետական բանակի շարքերում որպես բժիշկ: Ակտիվ մասնակցություն է ունեցել Հաչրենական մեծ պատերազմին և պարգևատրվել շքանշաններով: Այժմ անցել է թոշակի և բնակվում է Լենինգրադում:

Տարիներ առաջ, և. Արովյանի տուն-թանգարանում էստոնիայի գրականության և արվեստի վարպետների հետ տեղի ունեցած հանդիպման ժամանակ, մեծ լուսավորչի ժառանգներին կողմից շնորհակալական խոսքով հանդես եկավ Շուշանիկ Արովյանը, որ նրան էր եկել Մոսկվայից: Մի տեսակ մտթխածությամբ ու ափսոսանքով խոսքի վերջում նա ասաց, որ պապի ժառանգներից ոչ մեկը իր տաղանդով չի նմանվել նրան: Մասնավորացնելով խոսքը, նկատի ուներ գրականագիտությունը:

Սակայն նման խոստովանությունն ավելի քան համեստություն է: Մեծ լուսավորչի տոհմաձառի քննությունը ցույց է ապրիս, որ նրա սերնդի շուրջ 90 մարդուց 28-ը կյանքից հեռացել են վաղ հասակում, իսկ մնացած 62 հոգուց 20-ը չեն հասել շափահասության: Մնացած 42-ից 12-ը իրենց նվիրաբերել են գիտությանը. նրանցից 5-ը դոկտոր-պրոֆեսորներ են, 7-ը՝ գիտության թեկնածուներ: և. Արովյանի ժառանգներն ընթերցողների սեղանին են դրել տարբեր գիտությունների գծով ավելի քան 250 անուն գիտական աշխատություններ:

Հետաքրքիր են նաև նրանց մասնագիտական կողմնորոշման բնազավառները:

Այսպես՝ զբաղմունքով մանկավարժներ են 15-ը, բժիշկներ՝ 13-ը: Ըստ մասնագիտության բարձրագույն կրթություն են ստացել՝ քիմիայի գծով՝ 9-ը, ֆիզիկայի և մաթեմատիկայի մասնագետներ են եղել 6-ը, շինարարներ՝ 7-ը, ֆիզիոլոգներ՝ 2-ը և վարչական աշխատող՝ 1-ը:

և. Արովյանի տոհմաձառի սերունդների համար խիստ բնորոշ են եղել մտավոր դարգացածությունը, ձգտումը դեպի գիտահետազոտական աշխատանքները, ունեցած բազմակողմանի գիտելիքներն ուրիշներին հաղորդելը, ինչպես նաև բացառիկ ընդունակությունները՝ լեզուների տիրապետման բնազավառում: Եթե Վարդան ու Կոնստանտին Արովյանը և Վլադիմիր Բոժովսկին տիրապետում էին 6 լեզուների, ապա մյուսները՝ առնվազն՝ երեք լեզուների: Իսկ մի դիժ, որ բնորոշ է եղել բոլորի համար, դա ազնիվ, շիտակ, գործունյա, հայրենասեր և մարդասեր լինելն է:

3. Մեծ լուսավորչի ժառանգները

ՐՈՎԱՆՊԱՎՈՐՅԱԿ

Սառչարան	3
Վարդանի նշագր	6
Զարմանդուհուսի նշագր	20
Վերջարանի փոխարեն	33

Անն Մարկոսի երիցյան  
ԻՆԵ ԼՈՒԽԱՎՈՐՉԻ ԺԱՌԱՆԿԵՆԵՐԸ

Левон Маркосович Ерицян  
НАСЛЕДНИКИ ВЕЛИКОГО ПРОСВЕТИТЕЛЯ  
(На армянском языке)  
Ереван «Айтастан» 1987

Խմբագիր՝ Լ. Ե. Յեկրյան  
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Փապրյան  
Նկարիչ՝ Վ. Ք. Մանդակունի  
Տեխն. խմբագիր՝ Վ. Ք. Մազգյան  
Վերատպուող սրբագրիչ՝ Ս. Վ. Խաչատրյան

ՖԵ № 5474 ՎՖ 01161

Հանձնված է շարվածքի՝ 30.12.1987 թ.: Ստորագրված է տպագրության՝  
14.04.87 թ.: Փորձատ՝ 84×108<sup>1/2</sup>: Քուպ թպագրական № 1: Տառատե-  
սակ՝ «Գրքի սովորական» Տպագրություն՝ բարձր. 2,31, պայմ. տպագր.  
մամ., 2,52 պայմ. ներկ. թերթ, 1,42 հրատ. մամ + 4 ներդիր: Տպարանակ՝  
10.000: Պատվեր՝ 157: Գինը՝ 15 հոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երևան—9, Խաչնիկյան 28:

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28,  
Арташатакская районная типография Госкомитета по делам изда-  
тельств, полиграфии и книжной торговли Арм, ССР.  
ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի անտարի գործերի  
պետական կոմիտեի Արտաշատի շրջանային տպարան: